«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2025-2026
Պատմություն (8-րդ դասարան)

Անուն Հայրանուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

1. Ե՞րբ է տեղի ունեցել Շահ Աբասի կողմից հայերի բռնագաղթը: **(0,25)**

ա) 1555 թ. բ) 1590 թ. գ) 1604 թ. դ) 1639 թ.

2. Ո՞ր պայմանագրով է Ռուսաստանին անցել Արևելյան Հայաստանը: **(0,25)**

ա) Բուխարեստի բ) Գյուլիստանի գ) Թուրքմենչայի դ) Ադրիանապոլսի

3. Ո՞ր թվականին Կիլիկիայի հայկական իշխանությունը դարձավ թագավորություն: **(0,25)**

ա) 1080թ. բ) 1375թ. գ) 1198թ. դ) 1254թ.

4. Ի՞նչ է նշանակում մանուֆակտուրա: **(0,25)** ձեռքի աշխատանք

5. Ինչպե՞ս էին կոչվում Արցախում ստեղծված ռազմական ամրությունները: **(0,25)**

ա) բերդաքաղաքներ բ) սղնախներ գ) դղյակներ դ) զորանոցներ.

6. Ե՞րբ է Թեոդորոս Ռշտունին կնքել պայմանագիր Մուավիայի հետ. **(0,25)**

ա) 652 թ. բ) 640 թ. գ) 661 թ. դ) 639 թ.

7. Ո՞ր քաղաքում է լույս տեսել հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: **(0,25)**

ա) Փարիզ բ) Վենետիկ գ) Վիեննա
դ) Հռոմ

8. Ե՞րբ է Մեծ Հայքը բաժանվել Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև: **(0,25)**

ա) 301 թ. բ) 354 թ. գ) 387 թ. դ) 428 թ.

9. Հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչներից ու՞մ մասին են հուշումները, ճշեք Հայաստանի ազատագրության վերաբերյալ նրա կողմից գրված ծրագրերի անունները: **(1,0)**

- Մասնակցել է Էջմիածնի և Անգեղակոթի գաղտնի ժողովներին:
- Հանդիպել է Ռուսաստանի ցարի հետ:
- Ղեկավարել է Պարսկաստան գնացող ռուսական պատվիրակությունը:

Իսրայել Օրի, Մոսկովյան ծրագիր, Պֆալցյան ծրագիր:

10. Ու՞մ մասին են ստորև հուշումները, բրիստոնեական եկեղեցու ո՞ր ճյուղի հիմնադիրն է հանդիսանում: **(1,0)**

- Ռեֆորմացիայի հիմնադիրներից է:
- Պայքարել է Հռոմի պապերի կամայականությունների դեմ:
- Գերմանիայի Վիտենբերգ քաղաքի համալսարանի պրոֆեսոր էր:

Մարտին Մյութեր, բողոքական եկեղեցու հիմնադրում:

11. Լրացրու բաց թողնված բառերը: **(1,0)**

- Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցավ Արևելյան Հայաստանի զգալի մասը, բայց Երևանի և Նախիջևանի խանությունները դեռ մնացին Պարսկաստանի տիրապետության տակ:
- Հայկական մարզը կառավարվում էր մարզային վարչության կողմից:
- Խրիմյան Հայրիկը Բեռլինի վեհաժողովի մասին ասում էր, որ Հայաստանի շերեփը թղթից էր:
- Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը վերաբերում էր հայկական հարցին:

13. Ճանաչիր նկարը. **(2,0)**

ա. Հայկական ո՞ր պետության զինանշանն է:

բ. Ե՞րբ է այդ պետությունը ստեղծվել:

գ. Նշի՛ր հայտնի արքաներից մի քանիսին:

դ. Որտե՞ղ էր գտնվում այդ պետությունը:

Կիլիկիայի հայկական թագավորություն, 1080թ.՝ որպես իշխանություն, 1198թ.՝ որպես թագավորություն, Լևոն Երկրորդ Մեծագործ, Հեթում Առաջին, Միջերկրական ծովի հյուսիս- արևելքում:

14. Ճանաչիր նկարը. **(2,0)**

ա. Ո՞վ է նկարում պատկերված անհատը:

բ. Ո՞ր իրադարձությունից հետո եկավ իշխանության:

գ. Ո՞ր երկրի վրա հարձակումը ճակատագրական եղավ նրա համար:

դ. Ի՞նչ հայտնի կոչումներ/պաշտոններ է նա ունեցել:

Նապոլեոն Բոնապարտ, 1789-1794թթ. Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո, ճակատագրական էր Ռուսաստանի վրա հարձակումը, գեներալ, կոնսուլ, կայսր:

15. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: Կարող ես հարցին պատասխանել նաև շարադրելով: **(2,0)**

«Մեծ իշխան Կոստանդինը համոզեց կաթողիկոսին ու այլ մեծամեծներից ոմանց՝ թագավորեցնելու իր մանուկ որդի Հեթումին, որ մարմնապես առույգ էր ու տեսքով գեղեցիկ: Իսկ թագուհին [Զաբելը] չհամայնձայնվեց մանկանը կին դառնալ, ըմբոստացավ գնաց Սելևկիա այնտեղ գտնվող ֆրանկների [խաչակիրների] մոտ, որովհետև նրա մայրը [Լևոն I-ի կինը] ազգով ֆրանկ էր՝ Կիպրոս կղզուց: Իսկ Կոստանդինը առավ բոլոր զորքերը, պաշարեց քաղաքը, մինչև որ ստիպված թագուհուն հանձնեցին նրան: Տարավ նրան ամուսնացրեց իր որդու հետ»:

1. Ո՞ր թվականին են տեղի ունեցել սկզբնաղբյուրում նշված իրադարձությունները:
2. Ո՞ր արքայատոհմի հիմնադրման մասին է:
3. Ու՞մ դուստրն էր Զաբել թագուհին:
4. Ի՞նչ պաշտոն էր այդ ընթացքում զբաղեցնում մեծ իշխան Կոստանդինը:

1226թ., Հեթումյան արքայատոհմի հիմնադրամն մասին է, Զաբելը Լևոն Երկրորդ Մեծագործի դուստրն էր, Հեթումի հայրը՝ Կոստանդինը, զբաղեցնում էր սպարապետի կամ գունդստաբլի պաշտոնը:

16. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: Կարող ես հարցին պատասխանել նաև շարադրելով: **(2,0)**

«Հաշվի առնելով, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից, կարող է այնտեղ ապիր տալ բախումների և բարդությունների, [...] Բարձր Դուռը [Օսմանյան կայսրության կառավարությունը] պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարեկարգումներ, և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

1. Ո՞ր պայմանագրի մասին է խոսքը, ո՞ր պատերազմի ավարտից հետո է այն կնքվել:

2. Ե՞րբ և ո՞ր պետությունների միջև է այն կնքվել:

3. Այդ պայմանագրի ո՞րերորդ հոդվածից է մեջբերումը:

4. Ի՞նչ լրացուցիչ տեղեկություններ գիտես պայմանագրի մասին:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը կնքվել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, կնքվել է 1878թ. մարտի 3-ին Օսմանյան Թուրքիայի և Ցարական Ռուսաստանի միջև, ըստ պայմանագրի՝ Ռուսաստանին էին հանձնվում Արևմտյան Հայաստանի Կարսի, Ալաշկերտի և Բայազետի շրջանները, պայմանագրի 16-րդ հոդվածով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր վերափոխումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում հայ բնակչության կենսապայմանները բարելավելու համար: Ռուսաստանն իր ուժերը դուրս էր բերելու գրավյալ տարածքներից միայն այն բանից հետո, երբ Օսմանյան կայսրությունը կատարեր այդ վերափոխումները:

17. Լրացրու՛ Արշակունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգի գործակալությունների վերաբերյալ աղյուսակը: **(2,0)**

Գործակալություն	Ղեկավարող դաստ	Հիմնական գործառույթ
Սպարապետություն	Զինված ուժեր	Ղեկավարել է ինչպես արքունի զորաբանակը, այնպես էլ նախարարական զորամասերը:
Հազարապետություն	Հարկերի հավաքագրում	Սահմանել և գանձել է պետական հարկերը, հսկել ճանապարհների, կամուրջների, ջրանցքների կառուցումը:
Մաղխազություն	Թագավորի թիկնազոր	Հոգացել է արքայի անձի պաշտպանությունը:
Մեծ դատավարություն	Դատական գործեր	Զբաղվել է դատական գործերով: Նախաքրիստոնեական շրջանում դրանով զբաղվում էր քրմապետը, քրիստոնեական շրջանում՝ կաթողիկոսը:

18. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ ես տեսնում Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի միջև: Գրիր երեք նմանություն և չորս տարբերություն: **(2,0)**

Գյուլիստանի պայմանագիր	նմանություններ	Թուրքմենչայի պայմանագիր
1. կնքվել է 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, 2. կնքվել է 1813թ. հոկտեմբերի 12-ին, 3. Ռուսաստանին անցան Թիֆլիսը, Լոռի Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Արցախը և Զանգեզուրը, 4. Պարսկաստանը հրաժարվում էր Արևելյան Վրաստանից, Դաղստանից և Հարավային Կովկասի մի շարք խանություններից:	ա. կնքվել են Պարսկաստանի և Ռուսաստանի միջև, բ. երկու դեպքում էլ հաղթանակած կողմը Ռուսաստանն էր, գ. Ռուսաստանը ունեցավ տարածքային ձեռքբերումներ,	1. կնքվել է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, 2. կնքվել է 1828թ. փետրվարի 10-ին, 3. Ռուսաստանին անցան Երևանի և Նախիջևանի խանությունները, Օրդուբադի գավառը՝ ողջ Արևելյան Հայաստանը 4. Շահը պետք է վճարեր ռազմատուգանք և թույլ տար իրեն հպատակ հայերին ցանկության դեպքում վերաբնակվել Արևելյան Հայաստանի տարածքում:

	դ. Ռուսաստանը ամրապնդեց իր դիրքերը տարածաշրջանում:	

19. Մանրամասն ներկայացրու՝ **18**-րդ դարի սկզբի Արցախի ու Սյունիքի ազգային ազատագրական պայքարը (արշավանքներ, անհատներ, ճակատամարտեր, հարևան երկրների հետ ունեցած հարաբերություններ և այլն): Ինչու՞ Արցախի և Սյունիքի ազատագրական շարժումները չհասան վերջնական հաջողության, չնայած որոշ ռազմական հաղթանակների: **(3,0)**

XVII դ. կեսերից Օսմանյան Թուրքիան և Սեֆյան Պարսկաստանը աստիճանաբար թուլացան: Հայաստանի ազատագրման հեռանկարների համար նպաստավոր էր նաև միջազգային դրությունը:

1722 թ. Պարսկաստանի դեմ ապստամբած աֆղանների հաջողվեց գրավել մայրաքաղաք Սպահանը: Ստեղծված իրավիճակից փորձեց օգտվել Պյոտր I-ը, որի վաղեմի նպատակն էր Մերձկասպյան շրջանների գրավումը: Ձեռնարկվեց Կասպիական արշավանքը: Ռուսաստանի զինված օգնության ակնկալիքով օտար տիրապետությունը թոթափելու ֆայլեր ձեռնարկեցին վրացիներն ու հայերը: Պյոտր I-ը, սակայն, ընդհատեց արշավանքը և վերադարձավ Աստրախան: Ռուսական զորքերին սպասող վրաց-հայկական զորքերը ցրվեցին: Արցախ վերադարձած հայկական ուժերը կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի գլխավորությամբ մուսուլմանական իշխանություններին դիմադրելու նպատակով Գյուլիստանում, Շոշում (Շուշիում), Ջրաբերդում և այլուր ստեղծեցին ռազմական ամրություններ՝ սղնախներ: Դրանք շուտով վերածվեցին կիսանկախ իշխանությունների: Ռուսների արշավանքն անհանգստացրեց Օսմանյան կայսրությանը, որը ևս փորձեց օգտվել ստեղծված իրավիճակից և ներխուժեց Պարսկաստան:

Ազատագրական շարժման համար նոր մարտահրավեր դարձավ 1724 թ. կնքված ռուս-օսմանյան պայմանագիրը: Դրանով ամրագրվում էր Հարավային Կովկասն ազդեցության գոտիների բաժանելը: Վրաստանն ու Հայաստանն անցնելու էին Օսմանյան կայսրությանը: 1724 թ. Երևանը գրավելուց հետո Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ եղավ Արցախի և Սյունիքի նվաճմանը: Այսպիսով՝ Արցախի և Սյունիքի ուժերը ստիպված էին մարտնչել նաև ավելի հզոր ու վտանգավոր թշնամու՝ օսմանյան նվաճողների դեմ:

Հիշատակելի են Արցախում հատկապես Վարանդայի և Շուշիի մարտերում ունեցած հաջողությունները: Արցախում առավելությունն օսմանյան զորքերին անցավ 1728 թ.: Այդ նույն տարում մահացավ Գանձասարի կաթողիկոս Հասան-Ջալալանը: Ակտիվացան հայ առաջնորդների միջև ներքին տարաձայնությունները: Այդ պայմաններում հայկական զորամասերն աստիճանաբար կազմալուծվեցին:

Հայ ազատագրական շարժման մյուս կարևոր կենտրոնը դարձավ Սյունիքը: Հայ տանուտերերի խնդրանքով Վրաստանից Սյունիք եկած հայ զորավար Դավիթ Բեկը կարողացավ համախմբել տեղի մելիքների ուժերը և ապստամբեց պարսկական տիրապետության դեմ: Մի շարք հաղթանակներով նա կարողացավ իր տիրապետությունը հաստատել ամբողջ Սյունիքում: Սակայն դրությունը Սյունիքում կտրուկ վատթարացավ 1726 թ. գարնանը: Թիֆլիսը, Երևանն ու Գանձակը նվաճելուց հետո օսմանյան զորքերը կարողացան ռազմակալել Նախիջևանն ու Ղափանի մերձակա գավառները: Նահանջելով թշնամու գերազանցող ուժերի առաջ՝ 1727 թ. գարնանը Դավիթ Բեկն իր մի քանի հավատարիմ զինակիցների հետ ամրացավ Հալիձորի բերդում: Օսմանցիները չկարողացան ներթափանցել բերդ: Մի քանի օր անց Մխիթար սպարապետի ու Տեր Ավետիսի գլխավորած խմբին հաջողվեց գաղտնուղով դուրս գալ բերդից և թիկունքից հարձակվելով թշնամու վրա՝ պարտության մատնել նրան: Դավիթ Բեկը հաղթանակ տարավ նաև Մեղրիում: Սակայն այս ձեռքբերումը տևական չեղավ. Դավիթ Բեկի հանկարծակի մահվանից հետո (1728 թ.) նրա հետևորդների շրջանում ակտիվացան տարաձայնությունները: Իրավիճակը չշտկվեց, անգամ այն ժամանակ, երբ ազատագրական պայքարի գլուխ անցած Մխիթար Սպարապետը մի շարք ռազմական հաջողություններ ունեցավ

օսմանցիների դեմ: Տարաձայնությունների հետևանքով ապստամբական ուժերի կազմալուծումը հնարավոր չեղավ կասեցնել: Հայ զինվորականության շրջանում ծայր առած տարաձայնությունները պառակտեցին ուժերը: 1730 թ. Մխիթար Սպարապետը դավադրաբար սպանվեց:

Չնայած Արցախի և Սյունիքի ազատագրական շարժումները վերջնական հաջողության չհասան, սակայն ազատագրական պայքարը դուրս եկավ ծրագրային և ինքնապաշտպանական փուլերից: Այն վերածվեց լավ կազմակերպված և հետևողական ռազմական շարժման:

Սևագրություն